ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ, Հ. VIII, ԵՐԵՎԱՆ, 1970, 579 էջ

Հայ ժողովրդի բազմադարյան պատմության ամբողջական ու դիտական լուսաբանությունը, չնայած այդ բնագավառում բազմաթիվ սերունդների դործադրած ջանքերին, տակավին մնում է չավարտված։ Ուստի ամենայն դնահատանքի է արժանի այն հետևողական դործունեությունը, որը հատկապես վերջին տասնամյակում ծավալել է Հայաստանի դիտությունների ակադեմիայի պատմության ինստիտուտը՝ հայ ժողովրդի մարքսիստական, ամբողջական ու բազմահատոր պատմություն շարադրելու ուղղությամբ։

1967 թ. լույս տեսավ բազմահատորյակի VII հատորը, որն ընդդրկում է մեր ժողովրդի հետհոկտեմբերյան շրջանի պատմությունը՝ մինչև Հայրենական մեծ պատերազմի սկիզբն ընկած ժամանակաշրջանը։

Հայաստանում սովետական իշխանության հաղթանակի 50-ամյա տարելիցի նախօրյակին լույս տեսավ բազմահատորյակի նաև VIII հատորը, որն ընդդրկում է 1941—1965 թվականների ժամանակահատվածը[1]։

Շուրջ քառորդ դարի պատմություն ընդդրկող այս հատորը բաղկացած է առաջաբանից, հինդ բաժնից, 14 դլխից, վերջաբանից, ունի նաև կարևոր դեպքերի ժամանակագրություն և ցանկեր։

Առաջին բաժինը նվիրված է Սովետական Միության Հայրենական մեծ պատերազմի տարիներին թիկունքում և ռազմաճակատում հայ ժողովրդի հերոսական դործունեության լուսաբանմանը։ Սովետական Միության ընդհանուր պատմության լայն պաստառի վրա բաժնի հեղինակները բավական հստակորեն ցույց են տվել հանրապետության աշխատավորների ուժերի մոբիլիզացումը՝ պատերազմի առաջին իսկ օրերից սկսած, երբ միջոցառումներ մշակվեցին ու հաջողությամբ իրականացվեցին Սովետական Հայաստանը կարմիր բանակի համար զենք, ռազմամթերք, հանդերձանք և այլ միջոցներ պատրաստելու կարևոր օջախներից մեկը դարձնելու ուղղությամբ։ Սեղմ գծերով բացահայտված է հանրապետության արդյունաբերության վերակառուցման, բանվոր դասակարդի անձնվեր դործունեության, կոլտնտեսային դյուղացիության անդուլ աշխատանքի ընթացքը։

Այնուհետև ներկայացված է հայ ռազմիկների ու սպաների դործուն մասնակցությունը 1941 թ. կարմիր բանակի մղած պաշտպանողական մարտերին։

Ընթերցողը հուզմունքով է ծանոթանում Բրեստի ամրոցի պաշտպաններ Սամվել Մաթևոսյանի, Սոս Նուրիջանյանի, Գուրգեն Խաչատրյանի, Վահան Գրիդորյանի, Շմավոն Դավթյանի, Թորդոմ Ղուկասյանի և մյուսների անձնազոհ պայքարի դրվագներին։

Կիևի պաշտպանությունը պատերազմի առաջին շրջանի կարևորագույն իրադարձություններից մեկն եղավ։ Չնայած ուժերի անհավասարությանը, Կիևի պաշտպանները ավելի քան երկու ամիս արյունահեղ մարտեր մղելով դիմադրում էին թշնամուն։ Կիևի համար ծավալված հերոսամարտում ռուս, ուկրաինացի և սովետական այլ ազգերի մարտիկների ու հրամանատարների կողքին աչքի ընկնող սխրանքներ կատարեցին հայ ժողովրդի բազմաթիվ զավակներ։ Դրանցից են՝ Կիևի դինվորական օկրուգի, ապա Հարավ-արևմտյան ուղղության հրետանու պետ, զեներալ-լեյտենանտ Միքայել Պարսեղովը, 12-րդ բանակի շտաբի պետ, զեներալ-մայոր Բագրատ Առուշանյանը, հրաձգային դիվիզիայի հրամանատար, զեներալ-մայոր Քրիստափոր Ալավերդյանը, Հարավ-արևմտյան ռազմաճակատի շտաբի պետի տեղակալ և օպերատիվ բաժնի պետ, զեներալ-մայոր (այժմ Սովետական Միության մարշալ) Հովհաննես Բագրամյանը և շատ ուրիշներ։

---

[1] Հատորի խմբագրություն՝ Գալոյան Գ. Ա., Հակոբյան Ա. Մ. (պատասխանատու խմբագիր), Հարությունյան Ա. Բ. (Հարենց), Ղազախեցյան Վ. Ն.։ Հեղինակներ՝ Աղաբաբյան Ս. Բ., Բաբայան Լ. Մ., Գեղամյան Գ. Մ., Գրիդորյանց Ա. Կ., Գյոդակյան Գ. Շ., Դալլաքյան Կ. Լ., Խաչիկյան Լ. Ս., Խալեյան Ե. Մ., Խարմանդարյան Ս. Վ., Խուդավերդյան Կ. Ս., Խուրշուդյան Լ. Ա., Կոզմոյան Կ. Ս., Հակոբյան Ա. Մ., Հարությունյան Ա. Բ. (Հարենց), Հարությունյան Վ. Մ., Մնացականյան Ա. Ն., Սարդսյան Մ. Ս., Ստեփանյան Գ. Ա.։

Հարուստ փաստերով են ներկայացված հայ մարտիկների ու հրամանատարների հայրենանվեր խիզախությունները Լենինգրադի և Մոսկվայի մատույցներում դերմանական զորքերի հարձակումը կասեցնելու և ապա նրա մղելու մեծ ճակատամարտերի տարեգրության մեջ։ Այստեղ ընթերցողի առջև վեր են հառնում գնդապետ-մայոր Բենիամին Գալստյանի, մեծանուն զինական Հովսեփ Օրբելու, բեմի անզուգական վարպետ Վահրամ Փափազյանի, աշխարհազորայիններ Հովհաննես Այիրեկյանի ու Գրիգոր Կուլոզլյանի, հրետանային դիվիզիոնի հրամանատար Ադասի Մանուկյանի, հրետանային գնդի հրամանատար Հայկ Ղազարյանի և այլոց պայծառ կերպարները։

Հատորում հարուստ փաստերով է շարադրված Հայրենական պատերազմի տարիներին ձևավորված հայկական տղղային դիվիզիաների մարտական տարեգրությունը։

Ուշագրավ փաստեր են բերված այն մասին, որ մինչև 1943 թվականը շքանշաններով ու մեդալներով պարգևատրվածների, ապա և զինվորական դեկավար կադրերի կազմում ռուսներից, ուկրաինացիներից ու բելոռուսներից հետո, իրենց թվով հաջորդարար գալիս են հայ ժողովրդի զավակները։ Հայրենական պատերազմի սկզբնական շրջանում հայ ժողովրդի մեծ թվով զինվորական հրամանատարական կադրեր ու շարքայիններ հանուն հայրենիքի անձնազոհ կերպով մարտնչում էին սովետական զինված ուժերի բազմազգ միավորումների կազմում։

Սակայն զորքի պատերազմի փորձը, միութենական հանրապետությունների հետագա զարգացումն ու նրանց իրավունքների ընդլայնումը, սովետական հայրենիքի պաշտպանության մեջ սոցիալիստական բոլոր ազգերի մասնակցության ավելի ուժեղացումը անհրաժեշտ դարձրին կարմիր բանակի կազմում ստեղծել զուտ ազգային զորային կազմավորումներ։ Դրանց ստեղծումը նախապատրաստված էր սովետական ժողովուրդների մարտական սերտ համագործակցությամբ։

Մինչև վերջերս մեր պատմական գրականության և պարբերական մամուլի մեջ ընդունված էր հայկական հինգ դիվիզիաների գոյությունը։ Այս հատորում համոզիչ փաստերով հիմնավորված է, որ Հայրենական պատերազմի ժամանակ կային հայկական վեց դիվիզիա՝ 89-րդ, 390-րդ, 408-րդ, 409-րդ, 261-րդ և 76-րդ։ Բացի այդ, 28-րդ պահեստի բրիգադի կազմում 1942—1943 թթ. կային հազարավոր հայ ռազմիկներ, որոնք անհրաժեշտ պատրաստություն էին ստանում և երթային վաշտերով ուղարկվում ռազմաճակատ։ Անդրկովկասյան ռազմաճակատի մի շարք միավորումների, մասնավորապես 61-րդ, 320-րդ և 31-րդ հրաձգային դիվիզիաների կազմի կեսից ավելին նույնպես հայ մարտիկներ էին։

Սովետական բանակի կազմում մոտ կես միլիոն հայ սպաների և ռազմիկների, հատկապես հայկական ազգային դիվիզիաների մարտական սխրագործությունները հայրենասիրական ջերմ շնչով ու օրինական ազգային հպարտությամբ են ներկայացված գրախոսվող աշխատության մեջ։

Առաջին բաժնի հաջորդ գլուխներում շարադրված է Հայրենական պատերազմի արմատական բեկման և հաղթական ավարտի շրջանում թիկունքում՝ Սովետական Հայաստանում և ռազմաճակատներում ծավալված իրադարձությունների պատմությունը։ Հարուստ փաստերով է ներկայացված Կովկասի համար մղված ճակատամարտում, Վոլգայի ու Դնեպրի ափերին, Ուկրաինայի ու Բելոռուսիայի, Լենինգրադի ու Մերձբալթիկայի և օկուպացված սովետական մյուս տերիտորիաներից ֆաշիստական հորդաներին դուրս քշելու հերոսամարտերում մեր ժողովրդի ու նրա հարյուր հազարավոր զավակների ներդրած կարևոր ավանդը։

Հայ ռազմիկները, որպես ազատարար սովետական բանակի մարտիկները եվրոպական մի շարք երկրներում նույնպես սրբությամբ կատարեցին իրենց ինտերնացիոնալ պարտքը, մասնակցեցին Բեռլինի վրա հաղթանակի կարմիր դրոշի բարձրացմանը։ Ուշագրավ է, որ հայկական 89-րդ Թամանյան դիվիզիան Բեռլին մտած միակ ազգային դիվիզիան էր։ Պատերազմի տարիներին ցուցաբերած խիզախությունների համար մոտ 70 հազար հայ ռազմիկներ պարգևատրվեցին մարտական շքանշաններով ու մեդալներով։

Հատորում պատշաճն է հատուցված սովետական զորավարների մեծ ընտանիքի մոտ 60 հայ գեներալների գործունեությանը։ Այդ իմաստով առանձնակի տեղ է հատկացվել Սովետական Միության մարշալ Հ. Ք. Բագրամյանի, Սովետական Միության նավատորմի ծովակալ Հ. Ս. Իսակովի, ավիացիայի մարշալ Արմենակ Խանփերյանի (Ս. Ա. Խուդյակով) և զրահատանկային զորքերի մարշալ Հ. Խ. Բաբաջանյանի զորավարական բարձր արվեստի ու մեծ մասշտաբների ռազմական օպերացիաներ իրականացնելու նրանց հմտության բացահայտմանը։

Գրքում ցույց են տրված նաև հայ պարտիզանների ու երկրի օկուպացված շրջաններում՝ ընդհատակում թողնված մարդկանց փառապանծ գործերը։ Բավարար չափով ներկայացված է նաև ֆաշիզմի դեմ սփյուռքահայ առաջադիմական ուժերի ծավալած պայքարը, Սովետական Միության ու Սովետական Հայաստանի նկատմամբ նրանց ջերմ հայրենասիրական վերաբերմունքը։

Հատուկ գլուխ է հատկացված 1941—1945 թվականների մշակույթին՝ ժողովրդական կրթության, դիտության, գրականության ու արվեստի զարգացման հարցերին։

Աշխատության մյուս բաժիններում ամփոփված է ետպատերազմյան շրջանում՝ 1945—1965 թթ. հանրապետությունում տեղի ունեցած մեծ վերափոխությունների, բանվոր դասակարգի, կոլտնտեսային գյուղացիության ու մտավորականության ստեղծարար աշխատանքի շնորհիվ՝ կոմունիստական շինարարության բնագավառում ձեռք բերված նվաճումների պատմությունը։

Հաղթականորեն ավարտելով համաշխարհային երկրորդ պատերազմը, սովետական ժողովուրդը ձեռնամուխ եղավ խաղաղ շինարարության և ետպատերազմյան հնգամյակների տարիներին տեսնախնթաց բարձունքների հասավ ժողովրդական տնտեսության ու կուլտուրայի բոլոր բնագավառներում։ Այդ տարիներին դրայի վերելք ապրեց նաև Սովետական Հայաստանը։

Աշխատության հեղինակները համապատասխան փաստերով կարողացել են ցույց տալ վերջին քսանամյակում մեր հանրապետությունում ծավալված շինարարական վիթխարի աշխատանքների թափը, հզոր էլեկտրակայանների, արդյունաբերական նոր օջախների ու ձեռնարկությունների կառուցման հերոիկան։ Այդ մասին դրքում բերված են պերճախոս փաստեր։ 1941—1965 թթ. հանրապետությունում կառուցվել է 282 արդյունաբերական խոշոր ձեռնարկություն, նախապատերազմյան ժամանակաշրջանի 58-ի դիմաց։ 1965 թ. հանրապետության արդյունաբերության համախառն արտադրանքը 1940 թ. մակարդակը գերազանցեց մոտ 12,4 անգամ, իսկ 1913 թ. համեմատությամբ աճեց ավելի քան 107 անգամ։ Հանրապետությունում հսկայական աճ է ունեցել բանվոր-ծառայողների թիվը, բարձրացել է բանվոր դասակարգի տեխնիկական ու մտավոր մակարդակը, ինչպես նաև նրա դերը հասարակական-քաղաքական կյանքում։ Ընդամենը 25 տարվա ընթացքում ամբողջ ժողովրդական տնտեսության մեջ բանվորների և ծառայողների թիվը ավելի քան քառապատկվել է՝ 156 հազարից հասնելով 631 հազարի։ Համեմատաբար արագ տեմպերով է աճել արդյունաբերության, շինարարության մեջ և տրանսպորտում աշխատող բանվորների ու ծառայողների թիվը՝ 71 հազարից հասնելով 310 հազարի։ 1965 թ. Հայաստանի 55 արդյունաբերական ձեռնարկություններ աշխարհի 69 երկրներ էին առաքում ավելի քան 130 անուն արտադրանք, այդ թվում՝ ժամանակակից հաստոցներ, գեներատորներ, շարժական էլեկտրակայաններ, մեքենաներ, ճշգրիտ սարքեր և այլն։

Գրքում բավարար ձևով շարադրված են հանրապետության արդյունաբերության ու էներգետիկայի զարգացման բնագավառում հատկապես ՍՄԿԿ XX պատմական համագումարից հետո տեղի ունեցած էական փոփոխությունները։

Սոցիալիստական գյուղատնտեսության հետագա զարգացման գործում կարևոր ուղենիշ հանդիսացավ ՍՄԿԿ Կենտկոմի 1958 թ. սեպտեմբերյան պլենումը, որը նոր կուրս նշեց գյուղատնտեսական արտադրության բարձրացման ուղղությամբ։ Կուսակցության այդ և հետագա մի շարք պլենումների ու համագումարների որոշումների կենսագործումը դգալիորեն խթանեց ինչպես ամբողջ երկրի, այնպես էլ մեր հանրապետության գյուղատնտեսության զարգացմանը։ Ուժեղացվեց գյուղատնտեսության նյութատեխնիկական բազան, ընդլայնվեցին ցանքատարածությունները, կառուցվեցին ոռոգման հզոր սիստեմներ, ավելացան ջրովի հողատարածությունները, բարելավվեց անասնապահության վիճակը, կազմակերպչորեն ամրապնդվեցին կոլտնտեսություններն ու սովխոզները։ Զգալիորեն բարձրացավ գյուղացիության նյութական շահագրգռվածությունն ու նախաձեռնությունը։ Գրքում ցույց է տրված, թե այդ ամենի շնորհիվ ինչպիսի վերելք ապրեց գյուղատնտեսական արտադրությունը։ Գյուղատնտեսական մթերքների արտադրության բնագավառում աչքի ընկնող նվաճումների համար Սովետական Հայաստանը 1958 թ. դեկտեմբերին պարգևատրվեց Լենինի շքանշանով։

Աշխատության մեջ անհրաժեշտ լուսաբանություն է ստացել ժողովրդական տնտեսության զարգացման գործում սոցիալիստական մրցության ծավալման համար կուսակցական, արհմիութենական և կոմերիտական կազմակերպությունների գործունեությունը։ Ցայտուն ու պերճախոս փաստերով նկարագրված է հանրապետությունում սոցիալիստական մրցության նոր, բարձր ձևի՝ կոմունիստական աշխատանքի համար ծնունդ առած հայրենասիրական շարժման առաջամարտիկների մեծ բանակի պայքարը հանուն կոմունիստական աշխատելու, սովորելու և ապրելու։ Գրքում լավ է ներկայացված եղբայրական մյուս հանրապետությունների աշխատավորների հետ ետպատերազմյան տարիներին Սովետական Հայաստանի բանվոր դասակարգի ու կոլտնտեսային գյուղացիության սոցիալիստական մրցությունը, նրանց տնտեսական ու կուլտուրական փոխառնչություններն ու մերձեցումը։

Հատուկ գլուխ է հատկացված Սովետական Հայաստանի քաղաքների ու քաղաքային կյանքի զարգացմանը։ Հանրապետության 23 քաղաքներն ու 27 քաղաքատիպ ավանները ինքնին վկայու-

թյուն են այն մեծ վերափոխությունների, որոնք տեղի են ունեցել սովետական իշխանության շնորհիվ՝ մասնավորապես վերջին 20—25 տարում։ Եթե 1920 թ. Հայկական ՍՍՀ քաղաքային բնակչությունը կազմում էր ամբողջ բնակչության միայն 17 տոկոսը, 1939 թ.՝ 29 տոկոսը, ապա 1965 թ. այն արդեն հասել է 55 տոկոսի։ Արմատապես փոխվել է քաղաքների դեմքը, քաղաքային կենցաղն ու կուլտուրան։

Ընդարձակ բաժնով ներկայացված է 1946—1965 թթ. սովետահայ մշակույթը։ Այդ քսանամյակը նշանավորվեց մեր մշակույթի աննախընթաց վերելքով։ Հայ ժողովուրդը կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ ձեռք բերեց նշանակալի հաջողություններ հողեոր կյանքի բոլոր բնագավառներում՝ ժողովրդական կրթության դարպացման, մասնագիտական կադրերի պատրաստման, դիտության, դրականության ու արվեստի ծաղկման գործում։ Ցույց է տրված նաև հայ ժողովրդի մշակութային կապերի ընդարձակումն, սովետական բազմազգ ժողովուրդների մշակույթի փոխադրեցության ու հարստացման բեղմնավոր պրոցեսը, որը յայն թափով տեղի ունեցավ ատկապես կուլտուրական հեղափոխության իրականացումից հետո։

Հատորում անհրաժեշտ տեղ է տրված սփյուռքահայության պատմությանը, առանց որի խիստ թերի ու միակողմանի կլիներ բազմահատորյակը։ Համառոտակի բնութագրելով սփյուռքահայ հիմնական դաղթօջախների հասարակական-քաղաքական կյանքը, հեղինակներն այնուհետև ցույց են տվել, որ դաղութահայ զանգվածներն ու առաջադիմական կազմակերպությունները սերտորեն կապված են մայր հայրենիքի՝ Սովետական Հայաստանի հետ և նրանից են սպասում իրենց ակնկալությունների ու հույսերի իրականացումը։ Ներկայացված է նաև սփյուռքահայ մշակույթը՝ կրթական գործը, մամուլն ու գրականությունը, պատմագրությունը, արվեստը։

Հայ ժողովրդի պատմության VIII հատորը դերծ չէ նաև թերություններից, որոնցից մի քանիսը կցանկանայինք նշել։

Մեր կարծիքով կարելի էր ավելի շոշափելի փաստերով ցույց տալ հայ պարտիզանների և թշնամու կողմից ժամանակավորապես օկուպացված տերիտորիաներում կուսակցության առաջադրանքով ընդհատակում թողնված հայերի գործունեությունը։ Անհասկանալի է, թե ինչու արտաստմանյան մի շարք երկրներում ֆաշիզմի դեմ մարտնչած սովետական քաղաքացիների գործունեությունը ներկայացված է սփյուռքահայությանը նվիրված գլխում, առանց հայտնի նյութի ամբողջական ընդգրկման։

Պետք էր վերջնականապես հաստել ու ընթերցողին ներկայացնել Սովետական Միության հայազգի հերոսների թիվը, որը տարբեր աղբյուրներում տարբեր է նշվում։

Ստալինգրադյան շրջանի սոցիալիստական շինարարության ընթացքը լուսաբանելիս այս կամ այն միտքը հաստատելու նպատակով հեղինակները հաճախ են վկայակոչում թվական տվյալներ, որոնք երբեմն անհարկի ծանրաբեռնում են շարադրանքը։ Տեղ-տեղ կան կրկնություններ. Աշխատության որոշ հատվածներ կրում են նաև սխեմատիկ բնույթ, որոշ պրոբլեմների նկատմամբ ցուցաբերվել է միայն հպանցիկ մոտեցում։ Դա զգալի չափով վերաբերում է 1946—1965 թթ. մշակույթի պատմությանը։ Չնայած այդ շրջանի մշակույթը համեմատաբար լայն կտավի վրա է ներկայացված, այնուամենայնիվ, այստեղ առկա է մի շարք բնագավառների շրջանցումն ու մակերեսային ուրվագծումը։ Խոսքը առաջին հերթին վերաբերում է մասնավորապես սովետահայ մամուլի զարդացման ու նրա դերի լուսաբանման անտեսմանը։ Մշակույթին նվիրված այդ ընդարձակ բաժնում ոչ մի խոսք չկա պարբերական մամուլի, Ստալինգրադյան տարիներին կյանքի կոչված շատ թերթերի ու հանդեսների մասին։ Դա լուրջ վրիպում է։

Խիստ կցկտուր է շարադրված սովետահայ պատմագիտության զարդացմանը վերաբերող հատվածը։ Նրանում տեղ են դտել միայն մի քանի պատմաբանների անուններ, մինչդեռ սովետահայ պատմագիտության տասնյակ երախտավորների անուններն ու գործերը նույնիսկ չեն հիշատակված։

Հայ ժողովրդի պատմության ակադեմիական հրատարակությունը ցանկալի էր տեսնել առանդ վրիպակների, լեզվա-ոճական անհաջող դարձվածքների ու փաստական որոշ անճշտությունների, որոնցից դերծ չէ գրախոսվող հատորը (տես էջ 136, 146, 154, 372, 381, 528, 534, 558 և այլն)։

«Հայ ժողովրդի պատմության» VIII հատորն իր ամբողջության մեջ սովետահայ պատմագիտության ակնհայտ նվաճումներից է, արժեքավոր մի գործ, ուր առաջին անդամ ամփոփված է մեր ժողովրդի 1941—1965 թթ. պայքարի ու խիզախումների պատմությունը։ Այն աչքի է ընկնում ժողովրդական լայն զանգվածների գործունեությունը լուսաբանելու որոշակի հաջողությամբ։

Հ. ՈՒ. ՄԵԼԻՔՍԵԹՅԱՆ
(Պատմական գիտությունների թեկնածու)